



ՄԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԱԼՅԱՅԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆԸ ԱՐԻ ԱՐԱՆՑ

Կեսարիոն հայության ապրիլյան եղեռնի նահատակաց պատմությունը մեծ մասամբ պարզված է մեր հմուտ բանասեր Արշակ Ալ-պույաճյանի կողմեն, երկու մեծահատոր Պատմություն հայ Կեսարիոն գրքին մեջ։ Առհասարակ երախտարարտ կմանք իրեն։

Ուրիշ գրողներ ալ տակավին կփորձեն զրացնել զայն, որոնք ևս արժանի են գնահատման։ Ես ինքս ալ իմ համեստ կարողությամբ, իմ ծննդավայրս Չոմախու գյուղի և ապա «Գիրք ելից հայոց» գրքերու հրատարակությամբ, ջանացեր եմ հայ եղեռնի ապականության վկայություններով, արի արանց Հայկազյանց անմար կանթեղին մեջ կաթիլներ լուղ ձոնել, հիշատակ անմոռացության։

Այսօր, մեր այդ միլիոնավոր նահատակաց հիանալիս, մեր վեհափառի շնորհալի ապատգամին հետեւելով, կհամարձակիմ, Կեսարիոն առաջին մարտիրոսացած Ինճեսուի նախասարկավագ հովիվ, քաջ Տեր Ատոմի և իր համայնքին նահատակությունը ամփոփել, արտամորմոք, հակիրճ հուշերով։

1914—1918-ի աշխարհակեր պատերազմի սկսե օրերուն, 18-են մինչև հիսուն տարիքը ունեցող հայ երիտասարդները, որպես Թուրքիոն քաղաքացիներ զինվորագրված, բայց անգնե, բահ ու բրիչով, հոս ու հոն ցրված, ճամբաներ կշտկեին։ Ես ինքս ալ այդ բանավոր զինվորներու վեցերորդ վաշտին մեջն էի, Արգեսուի մոտ։

Մենք քաղաքացիական պարտականություն կկատարեինք հավատարմորեն և ահա մեր հավատարմությունը ինչպե՞ս գնահատվեցավ երիտասարդ Թուրքերու կողմեն։

Լսեցինք, որ 1915 մարտ 15-ին Կեսարիոն կոմիսեր Ահմեդ բեյը չորս ոստիկաններով կիջեանի Ինճեսուի գյուղապետ Վարդան

Բարսեղյանի սենյակը, և կհրամայե անմիջապես հանձնել հայ կուսակցություններու ղեկները։

— Ես տեղեկություն չունիմ, որ հոս կուսակցություններ կան և ղեկք ունին,— կըսե Բարսեղյանը։— Բայց ունինք քանի մը որսի հինումին հրացաններ, ինչ որ պատրաստ եմ հավաքել և ձեզ հանձնել։

— Խայիս գլավուր,— կաստե կոմիսերը,— չե՞ս գիտեր, որ հնչականները հոս բերած են 100 մարթին և սնդուկներով փամփուշտ։ Հիմա եթե ադոնք շուտով չհանձնեք մեզի, դուք դավաճաններ եք և ձեր արժանի պատիժը պիտի կրեք...

Հետո, կոմիսերը կհրամայե ոստիկաններուն, որ երթան հավաքեն գյուղին էրիկ մարդիկը և հոն բերեն։ Ոստիկանները զինվալ կմտնեն տունները և մեկ ժամվան մեջ հազիվ տասը հոգի կրնան հավաքել, որոնց մեջ են գյուղին հովիվը՝ Տեր Ատոմ Անշիկյան և սարկավագ Միհրան Դավիթյան և գյուղին հարուստը՝ Փանոս Օհանյան։ Արդեն գյուղին երիտասարդները բոլորը զինվոր էին։

Առաջին հարցուփորձին Օհանյան ծունկի կուգա կոմիսերին առաջ, վաթսուն ղեղին ոսկի նվիրելով։ «Բեյիմ,— կըսե,— մենք գյուղացիներս ոչինչ գիտենք, թե ի՞նչ է հնչակը և ի՞նչ է դաշնակը։ Մենք կհետևինք մեր տերտերին և մեր տիրացուի քարոզներուն...»։

— Պառկեցուցե՛ք ուրեմն սա ղադաբաշը և գանակոծեցե՛ք։

Այդ միջոցին Օհանյան և Բաղդասարյան, աչքի արցունքով կոմիսերին ոտքը կհամբուրեն և կաղատեն հովիվը։ Հոս միջանկյալ հիշենք, որ այդ սև օրերուն մեր գյուղաքաղաք էվերեկի տեղակալը ապագայի ոճրագործ Զե-

քին էր: Կոմիսիոնը անշուշտ կաշառքեն խելքի եկած, կհրամայե, որ գլուղեն անմիջապես հավաքեն որսի շախմախլը հրացանները և զանոնք, Տեր Ատոմն ալ միասին, ոստիկաններուն հետ կտանի կհանձնէ էվերեկի տեղակալին և կմեկնի Կեսարիա:

Զեքին անշուշտ հուսախաբ, կհրամայե որ դառաբաշը բանտարկեն:

Ամիս մը բանտի տառապանքեն ետք, Զեքին իր մոտ կբերե Տեր Ատոմը և կըսէ: «Խընգըր գյալուր, շոջուգ մը ալդադիյուրսուն, յոխսա զանն էդիյուրսուն բենիմ խաբերիմ յոգ մու...: Յաբըրըն շու խընգըրը, վուրուն, գեբերսին» (Մատկեցուցեք այս խոզը):

Տեր Ատոմին այդ պատժի մասին, ականատեսներու վկայութեամբ, կգրե Թեոդիկ 1925-ի տարեցույցի մեջ:

«Տեղակալ Զեքին կհրամայե պատկեցնել զայն և ֆալախան անցնել հոգերուն: Խոշոր բիրի մը հարյուրավոր անխնա բաշխումներուն տակ երբ արյունը կսկսի ժայթքիլ անոր մորթահերձ ներքաններեն, հարվածները կդադրին, մինչ գայմազամը՝ անգութ Զեքին, կրկին կստիպե հայտնել պատկանած կուսակցության թուղթերուն ու զենքերուն թաքստոցը...: Եվ իր հարցումին բացասական արդյունքեն ավելի զայրացած, կհրամայե նորեն պատկեցնել խոստովանելու համառությունը գործող այս քոմիթաճին: Այս անգամ ահռելի ճիշերու մեջ դարձյալ ծեծը կսկսի ահռելի կերպով: Հարվածները կտեղան թիկունքին, իրանին, կողերուն ու կողոփոցներուն, մինչև որ Տեր Ատոմ նվաղած կփուլի գետին...: Եվ ահա խոշտանգումի նոր գլուտ մը կընն Զեքին—խելքին՝ շարափոխյալ աստվածը: Երկու ճոկաններ կզետեղեն ծունկերուն ետև և սրունքները վրան ծալելով կնստեցնեն, մինչ երկու հոգի ուսերուն վրա կդնեն արջու թաթերնին՝ մարմինն ուժգնակի ճնշելով վար: Հոդոսկրի ու ձգաններու ցավագին ճարճար մը լսելի կըլլա հանկարծ, ընդհանուր լուռության մեջ...: Հարամուտըր կխախտի և Տեր Ատոմ կփլի ինքն իր վրա...:

Ոստիկանին մեկը՝ նույն պահուն «նարկիլ»-ի մը կաշեփողին շամբը՝ կմխն դեպի Տեր հոր սրբանը, մյուս ծայրեն փշելով: Որովայնը կսկսի ուռիլ և առթիւ սայրասուր խիթեր...: Քովի խշտյակեն (ֆենեսեցի ուսուցիչ) Գաբրիել Թագվորյանը արցունք կթափե... մինչև որ կարգը կուգա եղունգները քաշելու անգթութեան և աքցանին բիրտ խաժատումով մատներուն ծայրեն կարմիր արյունը կկաթկթի...» (Այսպիսի բառ է կարծեմ, ընթերցող):

Հաջորդ օրը, մայիս 20-ին, Զեքի կհրամայե դառաբաշը կապել իշու մը վրա, ինքն ալ (երկու մատնիչները) միասին՝ կառնե քսան զինյալ ոստիկաններ և կուգա ուղղակի Տեր Ատոմին տունը, ուր կհավաքվին թուրք աղաներ ալ: Սենյակը վար-վեր կխուզարկեն կուսակցական թուղթեր գտնելու համար, բայց ոչինչ կար, վասնզի Տեր Ատոմ իր ձերբակալութենեն առաջ ամեն բան այրած էր: Ասոր վրա Զեքին կկատղի և կհրամայե գանակոծել Տեր հոր ծնողքը և երեցկինը. «Պառկեցուցե՛ք և սատկեցուցե՛ք այդ շուներն ալ...»:

Ճիշտ այդ պահուն, Տեր Ատոմ «Յա Սուրբ Աստվածածին» կըսե և ակոսները կըճտնելով կհարձակի ոստիկաններուն վրան: Եվ անհավասար կռիվներու միջոցին, ոստիկաններեն սրահար կիյնա իր կնոջ և ծնողքին մարմիններուն վրա շնահեղձ:

Ապա հոգ կբերեն և թուպահար կսպանեն սարկավազ Միհրան Դավթյանը՝ որպես հեշակ ատենադպիր: Հետո կարգավ սրահար կըսպանեն Բաղդասար Գասպարյանը, Հովակիմ Բենան Պողոսը, Պենտիյան Գևորգը, Այտեյան Սարգիսը, Հանավազյան Հակոբը, Աբրահամ Ուստաֆեյմկրտչյանը: Եվ ապա անոնց մարմինները էշերու պոչին կապած, քաշկոտելով կտանին մոտի լեռը...: Եվ քվերնին մեյ-մեկ հրացան դնելով, իբր գնդակահար հեղափոխականներ Պոլիս կտեղեկագրեն մայիս 23-ին: Շարաթ օր Ինքեսուն ամբողջությամբ կբռնե սարուձոր:

